Արձանագրություն N 1-2

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	12.08.2020թ. ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝	Դ. Շատվերյան
	Գ. Գևորգյան
	Ար. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան
Բացակայում էր՝	
Հանձնաժողովի անդամ՝	Ռ. Եղիազարյան

1. ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հարցումների և պարզաբանման մասին

(Ա. Միրզոյան)

1.1 ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման համար կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 10.08.2020թ. ստացվել են հարցադրումներ:

Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը հաստատում է տրամադրվող պարզաբանման հայտարարությունը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

2. ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում փոփոխություն կատարելու մասին

(Ա. Միրզոյան)

2.1 ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման համար կազմված և հրապարակված ծավալաթերթում նախատեսվում է կատարել փոփոխություններ, որոնց անհրաժեշտությունը պայմանավորված է մասնակիցների կողմից թերությունների հայտնաբերմամբ:

Ի հայտ եկած թերությունները շտկելու նպատակով պատասխանատու ստորաբաժանման կողմից 11.08.2020թ. ներկայացված գրությամբ առաջարկվել է հաշվի առնելով թերությունների քանակը և այն հանգամանքը, որ հայտարարված գնման ընթացակարգի հրավերում փոփոխություններ կատարելու վերջնաժամկետը համարվում է 12.08.2020թ.-ը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ կետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 14-րդ կետի 2-րդ ենթակետը՝ թերությունները շտկելու համար հրապարակված ծավալաթերթում չափման միավորում տեղ գտած վրիպակներն

ուղղել, իսկ մնացած թերությունները սահմանված կարգով և ժամկետում փոփոխել և վերահրապարակել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Գ. Գևորգյան

---------- Ար. Գրիգորյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 **թվականի օգոստոսի** 12-**ի թիվ** 1-2 **որոշմամբ և հրապարակվում է**
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-**րդ հոդվածի համաձայն**

Ընթացակարգի ծածկագիրը N **ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ**-20/8

10.08.2020թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ պարզաբանումը.

ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Ծավալաթերթում **Աստիճանների վերականգնում** բաժնում կետ 232, կ. 323 և կ. 385 – ում չափի միավորները *100**մ**2* են և ծավալները *12.060*, իսկ նախագծի մասնագրում (թերթ ԱՆ, Կ-18) համապատասխանաբար՝ ***մ**2* և *40*:

2. Ծավալաթերթում **Օդափոխության** բաժնում կետ 532 - 536 –ում չափի միավորները *100**մ**2* են, իսկ նախագծի մասնագրերում՝ ***մ**2*, իսկ կետ 537 - 544 –ում չափի միավորները ***հատ*** են, իսկ նախագծի մասնագրերում՝ ***մ**2*: Սակայն ծավալները անփոփոխ են:

3. Ծավալաթերթում **Տաք ջրամատակարարում**; **Շին. աշխատանքներ** բաժնում կետ 636 - 639–ում չափի միավորները ***գծ.մ*** են, իսկ նախագծի մասնագրերում՝ ***հատ***: Սակայն ծավալները անփոփոխ են:

4. Ծավալաթերթում **Էլեկտրաուժային աշխատանքներ** բաժնում կետ 795 – ում տրված է <Մալուխատար մետաղական դագված 300*50*2000մմ> <հատ> <37>, իսկ կետ 813 – ում տրված է <Մալուխատար մետաղական դագված 300*50*2000մմ> <գծ.մ> <37>: Նույնը վերաբերվում է նաև կետ 814-ին:

5. Ծավալաթերթում **Դիահերձարանի մասնաշենք**; 14. **Հովհար** 1 բաժնում կետ 110 – ում տրված է <Պոլիկարբոնատից հովածածկ> <100մ2> <9.040>, իսկ նախագծի մասնագրերում չափի միավորը ***մ**2* է, այն դեպքում, երբ մասնաշենքի ամբողջ մակերեսը կազմում է 159մ2:

6. Ծավալաթերթում **Վակումի համակարգ** բաժնում կետեր 85 – 91 –ը անմիջապես շարունակությամբ նույնանման կրկնվում են կետեր 92 – 98 –ում:

7. Ծավալաթերթում **Արևային էլ. կայանի մոնտաժում**; **Մոնտաժ** բաժնում կետեր 15 – 28 –ից որոշները, ենթակապալային մասնագիտացված կազմակերպության ընդհանուր դիտարկմամբ, հնարավոր է ունեն չափի միավորի կամ ծավալի շտկման անհրաժեշշտություն:

8. Ծավալաթերթում **Կաթսայատուն**; **Օդափոխություն** բաժնում կետ 419–ում տրված է <Կարգավորիչ ճաղավանդակ> <հատ> <163.000>, կետ 420–ում տրված է <Օդատար ցինկապատ թիթեղից կլոր կտրվածքը 0,6մմ հաստ D=125մմ> <մ2> <2.000> և կետ 421 – ում տրված է <Զոնտ ցինկապատ թիթեղից կլոր կտրվածքի D=300մմ 0,8մմ, 1-հատ> <մ2> <2.000>, և բոլոր երեք կետերում չափի միավոր / ծավալ համադրությունը տվյալ կաթսայատան համար, մեր կարծիքով, կարծես թե շտկման կարիք ունի:

9. Ծավալաթերթերում **Մասնաշենքի սառը ջրամատակարարում**; **Սան. Տեխ. աշխատանքներ** բաժնի կետեր 583 – 590–ը ամբողջությամբ և նույնանման կրկնվում են **Հաշվարկ** 3; **Կաթսայատուն** բաժնի կետեր 342 – 349 – ում:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Վերը նշված 1-ից 9 կետերով ներկայացված հարցադրումները գնահատող հանձնաժողովի կողմից ընդունվել են ի գիտություն, իսկ թերությունները շտկելու համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ, որոնց արդյունքում հրապարակված ծավալաթերթում չափման միավորում տեղ գտած

վրիպակներն ուղղվել են, իսկ մնացած թերությունները սահմանված կարգով և ժամկետում կփոփոխվեն և կվերահրապարակվեն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Տաթևիկ Վասիլյանին:

Հեռախոս՝ 011621821
Էլեկտրոնային փոստ՝ tender2@minurban.am կամ urbanpiu.gnumner7@gmail.com
ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով